ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.4, Հեռ. 060656505 ,
info.metsamor@mta.gov.am

N **03254**
17 հուլիս 2025թ.

«ՔՈՆԹՐՈԼ ՖԱՍԱԴ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար իրականացված Մեծամորի «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/39 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «ՔՈՆԹՐՈԼ ՖԱՍԱԴ» ՍՊԸ-ն, որի հետ 09.06.2025թ. կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/39-4 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում հետագայում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 23.06.2025թ. ծանուցվել է համաձայնագիր: Սակայն սահմանված ժամկետում՝ մինչև 14.07.2025թ. ներառյալ, Ձեր կողմից չի ներկայացվել հաստատված համաձայնագրի տարբերակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «ՔՈՆԹՐՈԼ ՖԱՍԱԴ» ՍՊԸ-ի հետ կնքված անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/39-4 ծածկագրով պայմանագիրը 17.07.2025թ-ից միակողմանի լուծվել է և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը կնքելիս ներկայացրել եք միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի տուժանքի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովումներ, համապատասխանաբար՝ 15,552.00 (տասնհինգ հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամի և 23,328.00 (քսաներեք հազար երեք հարյուր

քսանութ) ՀՀ դրամի չափով, առաջարկում ենք հաշվի առնելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. 31.07.2025թ.-ը ներառյալ, ապահովել նշյալ գումարների փոխանցումը՝ Մեծամորի համայնքապետարանի ՀՀ Ֆինանսների նախարարությունում բացված հատուկ գանձապետական հաշվին (900335239373):

Վերոնշյալի վերաբերյալ Մեծամորի համայնքապետարանը դիմել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կապ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676